# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Ինտերնետ կապի տրամադրման (այլընտրանքային կապ) ծառայության» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի ապրիլի 05-ին կնքված N «ՆՄԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/7-1» ծածկագրով պայմանագրում 2020 թվականի մայիսի 05-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1-Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը:

Փոփոխության նկարագրություն- Պայմանագրի գործողության ժամկետի երկածգում 30 օրացուցային օրով և Պայմանագրի գնի ավելացում Պայմանագրի գնի 10 %-ի չափով:

Փոփոխության հիմնավորում- ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետեր, 05.04.2019թ. կնքված N «ՆՄԾՏԻԿ- ԷԱՃԾՁԲ-19/7-1» ծածկագրով գնման Պայմանագրի 7.5 և 7.8-րդ կետեր:

Պատվիրատու՝ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

2019թ. ապրիլի 05-ին կնքված N ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/7-1 ծածկագրով ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք. Երևան «05» «05» 2020թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Արա Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1.Համաձայնագրի առարկան

Հիմք ընդունելով Կողմերի միջև 05 ապրիլի 2019թ.-ին կնքված N ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/7-1 ծածկագրով պայմանագիրը (այսուհետև Պայմանագիր)՝ Կողմերը որոշեցին կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Պայմանագրի 4.1. ենթակետով նշված պայմանագրի գինը ավելացնել 10 տոկոսով՝ 60,000 (վաթսուն հազար) ՀՀ դրամով և Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը սահմանել 660,000 (վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

1.2 Համաձայն Պայմանագրի 7.6 ենթակետի՝ ծառայության մատուցման ժամկետը երկարացնել 30 օրացուցային օրով և ծառայությունների մատուցման ժամկետի ավարտը սահմանել 05.06.2020թ. ներառյալ:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է մեկ (1) էջից, կնքվում է հայերենով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ | «Յուքոմ» ՓԲԸ |
| Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.ՈՒլնեցի 68 | Գործ. հասցե՝ ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9 |
| Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ | Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ\Հ 163518012543 | Հ\Հ 1570043102134100 |
| ՀՎՀՀ 02602449 | ՀՎՀՀ 00024873 |
| Գործադիր տնօրեն՝ | Գլխավոր տնօրեն՝ |
| ------------------- Ա.Աբրահամյան (ստորագրություն) | ------------------- Ա. Խաչատրյան (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |